«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

24 սեպտեմբերի, 2024 թ. N 23- Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 59-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25–րդ հոդվածի 4–րդ մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 4–րդ մասը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 5.1.1. (6) կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Պալատի խորհրդի 2021թ. հոկտեմբերի 14-ի N 59-Լ որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

ա) 2.2 կետի գ) ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«գ) համապատասխան աշխատանքային փորձն ընդգրկող ժամանակահատվածում գործող հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրությամբ սահմանված հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպության, խոշոր կազմակերպության և (կամ) միջին կազմակերպության գլխավոր հաշվապահի գործառույթները կատարած հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության լիազոր ներկայացուցիչ:»

բ) 2.6 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2.6 Ազատում շնորհվում է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (այսուհետ՝ ACCA) անդամներին՝ Որակավորման քննությունների ծրագրի բոլոր առարկաների քննություններից: Ազատում շնորհվում է ACCA-ի որակավորման քննությունները հանձնած՝ ACCA-ի անդամ չհանդիսացող անձանց՝ Որակավորման քննությունների ծրագրի այն առարկաների քննություններից, որոնք համարժեք են ACCA–ի որակավորման համար հանձնված քննությունների առարկաներին: Ազատում շնորհվում է Որակավորման քննությունների ծրագրի 1-ին և 2-րդ առարկաների քննություններից այն անձանց, ովքեր ազատվել են ACCA-ի որակավորման համարժեք առարկաների քննություններից և չեն հանդիսանում ACCA-ի անդամ: Որակավորման քննությունների ծրագրի առարկաների և ACCA–ի որակավորման քննությունների առարկաների համարժեքությունը որոշվում է ըստ Կարգի հավելված 1-ի»

2. Պալատի խորհրդի 2021թ. հոկտեմբերի 14-ի N 59-Լ որոշման Կարգի հավելված 1-ը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Պալատի որակավորման քննություններից ազատման նպատակով ACCA-ի և Պալատի որակավորման քննությունների ծրագրերի առարկաների

համարժեքության աղյուսակ

Պալատի որակավորման քննությունների ծրագրի առարկան	Համարժեք համարվող ACCA-ի որակավորման քննությունների ծրագրի առարկան
Ֆինանսական հաշվառման հիմունքներ	Financial Accounting (FA)
Կառավարչական հաշվառում	Management Accounting (MA)
Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք	Corporate and Business Law
ՀՀ հարկային օրենսդրություն	Taxation
Ֆինանսական կառավարում	Performance Management (PM) կամ Advanced Performance Management (APM) և Financial Management (FM) կամ Advanced Financial Management (AFM)

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում	Financial Reporting (FR-INT) կամ Strategic Business Reporting (SBR)
Աուդիտ և հավաստիացում	Audit and Assurance (AA-INT) կամ Advanced Audit and Assurance (AAA-INT)

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց հետո և Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**